

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

թի 29

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրչի հեղինակ	ԽՄԲԱԴՐԱԿԱՆ
Արեղաձագն յԱրմառ	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՅԻԶԱԿՅԻ
Հոգիի եջեր. «Սերք».	ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ
ձամբու Նօթեր	ՍՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ
Անսեր (Քմայ)	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
Բժեկական Քրոնիկ	ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀՎԵՐՅԻ ՈՐԴԻ

Օրուան Նօթեր: — Միջազգային արձագանգ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՌԱՍՈՆ ղրռ. եւ ԳՈՐԾԱՆԵՐՈՆ համար յիսուն ղրռ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Գրանգ կամ 5 բուլլի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռ-ԲԷ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (ماسیس) غرضی اداره سی

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկապատկեր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր մարդ-
վերդաց գլխաւոր ըմպելիին դարձած է,
այնքան բազմաթիւ տեսակներ ունի որ,
արդարեւ գործածողներուն համար բաւա-
կան դժուար է լու ընտրութիւն մը ընել:
Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են
իւր ախորժակամ եւ քաղցրաւոր, մասնք
ալ թէեւ նոյնքան ախորժակի համ ու հոտ
չունին, գերազանց են սակայն իւր կազ-
դութիւն եւ զօրացուցիչ. վերջապէս իւրա-
քանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն
ունին որոնք զինքը կը զանազանեն ու-
րիչ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ
այդ յատկութեանց մէջէն
կարեւորները կը միացնէ իր
վրայ, այսինքն՝ գոյն, համ-
հոտ եւ մանաւանդ կազ,
զուրիչ եւ զօրացուցիչ առ-
ջուզական ազդեցութիւն
մը, եւ այդ թէյն է ճաբո-
նի քիյը, որ այդ յատկու-
թեանց շնորհիւ կը յարմարի մէջն աւորի-
քի ու կազմութեան, մէջն կլիմայի եւ
եղանակի եւ մէջն ճաշակի:

Եսպիտակեան եւ Իսպաղուլեան քիյի մեծ
վաճառատունը, իր բազմաթիւ յաճախոր-
դաց ծառայութիւն մը մատուցանելու հա-
մար, այս անգամ մեծաքանակ ներածած
է ճաբոնական զուա թէյ մասնաւոր եւ
դակական ասփերով ու կը հրաւիրէ օգ-
ուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը
փոփոքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով. առողջապահիկ եւ
կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա-
կան, չինական, Սէյլան եւ Ճափոնի մա-
ուաւ տեսակ թէյեր:

6-10

Ուսադուրեւի մարգարի

ՏՈՔ Թ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնախ-
աբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ
որ 15 տարւան գործունէութեամբը մեծ
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յա-
զայ յաճախողներուն թէ բնակարանը
փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18:
Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ
կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով
զղային եւ հոգեկան ու երեւակայական
ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս
նէվրոսթէնի եւ tic անաւանաւած աչքի
երեսի եւ ուտեւու ազեղ եւ ակամայ
շարժումները եւ դաշտանի դադարումէ
յառաջ եկած զղային խռովումները եւ
երիտասարդական մայիքները, ինչպէս
նաեւ գինեմալիքը, մօրիֆիմալիքը եւ այլն:
Կիրակիներէն զատ մէջն օր կէսօրէն
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն-
դունի, եւ ուրբաթ օրերը ճիւղարար կը
դարձանէ վկայեալ աղքատները: 6-10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան, Առողջու-
թեան եւ Երկայնակեցութեան: Բրոք. Պոյս
Լէյնջրէ: Թարգմանեց Անգլիերէնէ, Սա-
մուէլ Գ. Վարժապետեան: Կ. Պոլս.
Տպագրութիւն, Յ. Մամթէսեան, 1905:

Հեռաքրքրաւոր, հրապուրիչ, զբո-
սալի եւ մէջն սեռի ու հասակի յայտ պի-
տանի գրքայկ մը 248 երեսներէ առղկա-
նալ: Թղթակաղմին գինն է 8 դահ.,
Լաթակաղմին՝ 10 դահ.: 10է աւելի
գնողներու 15 աւ հարիւր եւ 50է աւելի
գնողներու 20 աւ հարիւր զեղչ: Վաճառ-
ման կեդրոնատեղիներն են Յ. Մամթէսե-
ան թղթավաճառանոցը եւ Պրէկնց գրա-
տունը:

6-10

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը Հիգսոնի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՆԱԳՐՈՒԹԻՈՒՆ)

Թորախտ, պրոնչիտ, հազ, հարբուխ և բարակցաւ, և աղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրաճա) և բոլոր արեան աղեաններու համար անդին դարման մըն է: Առաջին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Իմեն տարի հաղարաւոր աղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը, ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Վերջերս մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշելու վաղ ասոր ուշագրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր բեղաժողովները և բեղաժամանակները ինչ ծախս:

ՑԿՍԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

VICTORIA Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման քուսկի նիւղեր
DE ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
BERLIN Առանց բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
բուն վճարումները շաբաթական մասնավճարներով անդի կուենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 605,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին արայականնրով արտադրուող եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻՉԷՆԱ

Կալարա, Պրեքէք Խան
Օրիանդ-Պանքի դեմ

ԳՐԶԻ ՀԵԳՆԱՆՔ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Մասիսի երկու աշխատակիցներ, ենովք Արմէն և Եղուարդ Գօլանճեան, վէճի բռնուած են այս պահուստ՝ երկու տարբեր շաբաթաթերթերու մէջ: Այս պղտիկ գրապայքարը, որ անձնականութիւններ ալ կը շօտափէ, իրեն առարկայ ունի անմեղունակ զբոսածք մը, Պ. Ե. Գօլանճեանի «Ժայռին ջուրը» զոր Բիւրակցի մէջ արտատպելու պատիւը ըրած էր Պ. Ե. Արմէն, annotationներու դէզով մը, փաստաբանելու համար թէ... իր նկարագրած աղբիւրի ջուրին պէս վճիտ չէ և թէ ոճի խրթնութիւններ ու յետակութեան դէմ մեղանշող բացատրութիւններ կը պարունակէ: Ենթադրելով իսկ որ այդպէս եղած ըլլար, չըմբռնեցինք թէ Ա. Լեսաբեքի քոյր — թերթին համար ինչ շահեկանութիւն ու օգտակարութիւն կար՝ իր վեց — եօթը էջերը նուիրելու՝ Մասիսի մէջ երեւցած յօդուածի մը լեզուական մաղւմին կամ զառմին, ուսկից հաղիւ քանի մը հատիկ կորեկ պիտի թափթփէր, ամբողջութիւնը մաքուր ու անարատ ցորեն մնալով:

Շատացած էինք այս մտածումով, երբ անցեալ շաբթու տեսանք թէ Հանրագիտակի խմբագրութիւնը հաճոյակատարութիւնն ունեցեր է հրատարակելու Պ. Գօլանճեանի մէկ պատասխանը ուր, Եղիա Տէմիրճիպաշեանին գրական հետեւորդը, լուսաբանութիւններ կը պարզէր, յայտնապէս զգածուած տողերով, հաստատելու համար թէ իր յօդուածին մէջ սխալ կամ մուծ պարբերութիւններ չիկային, թէ և՛ մեր խոնարհ կարծիքով՝ այսքանն իսկ

աւելորդ յօդուածիւն մըն էր «Ժայռին ջուրը» հակալքողական յօդուածներու շարքին մէջ լաւագոյններէն ու ինքնատիպներէն մէկը նկատուեցաւ, նկարագրական ձեւի մը տակ՝ արեւոյններուն վրայ աղբիւր սահմանուած:

Դրական ու լրագրական սովորութիւններու կամ բարքերու մաս կը կազմէ որ նոր երեւոյզ գիրք մը, տեսարակ մը, քննադատութիւն, թարգմանութեան մը սխալները մատնանշողին, բանագրութիւն մը ձաղկուի, իրողութեան մը կամ սկզբունքի մը վրայ վիճաբանուի, լայց ընթացիկ յօդուածներն ալ տարբարութեան ելլել...: Այսչափ puritain ենք մեր սովորական աշխարհաբարին մէջ, և ո՞վ է ան մեր գրողներէն որ կրնայ պարծիլ թէ իր գրուածքներուն մէջ քերականական թերի մը, լեզուական որ և է անճշդութիւն կարելի չէ գտնել, իսկ մասնաւորապէս Բիւրակցի հաւաքածոները գլուխ — գործօցներ են գրական նրբութեան, ոճի գեղեցկութեան, քերականական անսխալութեան: Խնդիրը՝ պրպտելու համբերութիւն ունենալուն վրայ է: Յետոյ, ինչ է եղեր Եղուարդ Գօլանճեանին մեղքը որ զինքը հրապարակաւ հեղնելու կ'ելլեն ու խոշորացոյցով թերութիւններ կը փնտռեն իր տողերուն մէջ, իբր թէ ինք նուազ կարողութիւն և արժանիք ունենար գրելու՝ քան զինքը դատաւիտող մը: Վերջին հինգ — վեց տարիներու մեր լրագրական գրականութիւնը հրատարակած է իրմէ ոտանաւորներ որոնք մեղամաղձիկ ազուորութիւն մը ու խորունկ

հմայք մը ունին և արձակներ որոնք իմաստասիրական նիւթերու շուրջը կը դառնան. այդ պարզուկ ու տրտում երեւոյթով և սնապարծութենէ խորշող երիտասարդը, որ՝ ի մէջ այլոց՝ Մաքս Նորտաուի գրուածքները ծանօթացուց մեզի, ինքն ալ իր համեստ բայց գնահատելի բաժինը ունի մեր ժամանակակից մտաւորական կեանքին մէջ, և անիրաւութիւն է զինքը ծաղրանքի առարկայ դարձնել, որ և է նկատուումով կամ պատրուակով: Մեր նոր գրողները լաւագոյն օրինակ մը պէտք էր տային գրական եղբայրակցութեան ու փոխադարձ գնահատումի:

* *

Գրչի հեգնանք...

Ահա ընթացիկ ապրանք մը, զոր հանդուրդը ու կրցողը կուզէ քնել, վստահ ըլլալով թէ բան մը չպիտի կորսնցունէ ատով ու ընդհակառակը՝ ամէնուն հաւնած մէկ գործը կամ անձը ծաղրած ըլլալու եղակաւորութիւնը պիտի ունենայ: Վերջին ժամանակներս այս տեսակ ցուցադրութիւններու նորէն հանդիսատես եղանք մեր թերթերէն ոմանց մէջ, հակալքողական մրցումին առթիւ որուն հաստատիչը իր սպասածէն աւելի հեգնախառն գրուածքներ կարդաց, իր հասցէին ուղղուած: Ատոնց մէջ կային ամէն տեսակները, միմոսականութիւն, բռնագրգռիկ սրամտութիւն, անձնական վիրաւորանք: Եւ ինչո՞ւ այս բոլոր աղմուկը. հասկցնելու համար թէ իրենք, այդ գրողները, թեկնածու չեն մրցանակի, թէ նիւթական որ և է ակնկալութենէ վեր՝ միմիայն գրելու հաճոյքին համար կը գրեն, թէ լաւագոյն կը համարին *esprit* մը փախցնել քան... 5—10 ոսկինոց «ողորմելի» գումար մը: Եւ դե՞ռ ըսողներ կան որ մեր գրականութիւնը ծաղկեալ վիճակ մը չունի, թէ մեր գրողները, մասնաւորապէս՝ քրոնիկագիրները, զրամի կարեւորութիւն կուտան, թէ լաւ յոռին զանադանել չեն գիտեր, և թէ հաճելին ու օգտակարը մէկտեղ բերել ու գնահատել չեն ուղեր: Տիար Յովհաննէս Թաւադեանի դէմ գրուածները կը զօրեւն միթէ ասոր հակառակը ապացուցանելու:

Ուրեմն տախկութիւններ պէտք են մեր լրագրութեան, յաւիտենական միօրինակութիւն՝ որպէս զի հետաքրքրուինք: Թաղականի, հոգաբարձուի խնդիր, դասագիրք քնելու մրցումներ, տէրտէրի վարժապետի վէճեր՝ որպէս զի լեցնենք մեր սիւնակները: Վաճառականը իր տպածոներու կամ գորգերու դէզին մէջ պէտք է մնայ, ու զրամատէրը բնա՛ւ մտքէն չանցունէ գրականութիւնը կամ լրագրութիւնը քաջալերել, իր ըմբռնած ձեւով, նոր ձեւով մը: Հակառակը փորձողը՝ հեգնութեանց տարափ մը պիտի հրաւիրէր իր վրայ:

Մեր մասին, իբրեւ առաջին հրատարակողը Հակալքողական Մրցման Յայտարարութեան, որ այնչա՛փ համակրալից խմբագրական—յօդուածներով արտատպուեցաւ նոյն իսկ ա՛յն թերթերուն մէջ որոնք այսօր կը կարծեն ուշագրաւ բան մը ըրած ըլլալ «մատերնուն ծայրը փաթթելով» զայն՝ իր վերջաւորութեանը մօտ, չենք կրնար լռութեան կամ մոռացութեան տալ այս հակասութիւնը ու *volte—face*: Մանաւանդ որ, հեգնողողը ո՛չ միայն մրցումն է, այլ անոր հաստատիչը, աղնիւ ու յարգելի անձնաւորութիւն որ գրական, կրթական ու բարեպաշտիկ պէտքերու հոգացման մէջ ձեռնադուլութեան լայն բաժին մը կունենայ միշտ ինքնաբերաբար, ու այս անգամ ալ՝ գումար մը տրամադրելով հանրօգուտ ու առողջապահիկ յօդուածներու լաւագոյններուն համար, մտածո՞մը ունեցեր էր ինքն ալ յօդուածներու շարք մը գրելու, ներքին ու հանրային կեանքէ յիշատակներով, գործնական ու առողջ խորհրդածութիւններով, մանրադէպերով համեմուած, որոնք այնքան հետաքրքրութեամբ կարդացուեցան:

Ձարմանալի է որ, դեռ երէկ դպրոցական յարկէն բաժնուող տղայ մը պիտի կրնայ մեզի մարսեցնել տալ իր յիշատակները ու տեսութիւնները, յետին տիրացուն առուտուրի ու գործնական կեանքի վրայ պիտի ճառէ, մինչ վաճառական մը որ կեանքը կը ճանչնայ իր ամէն ելեւէջներովը, որ գործի տենդայոյզ մթնոլորտի մը մէջ կ'ապրի և ինքնօգնու...

թիւնը իր անձին փորձովը կը ճանչնայ, պէտք է եղեր որ պատմէ մեղի իր տեսածներէն ու գիտցածներէն, կեանքի մեծ դպրոցին՝ գործի ասպարէզին վրայ դարձնելով մեր ուշադրութիւնը: Ու մանաւանդ, պէտք է եղեր որ այդ միեւնոյն վաճառականը, ընկերային մեծ աղէտ մը՝ արեւոյթութիւնը՝ իր համայնքին մէջէն նուազեցնելու համար գրիչ շարժէ ու շարժել տայ ... որովհետեւ ասոնք մեր լրագրական սովորամոլութեան, routineին հակառակ են:

Փանթէզին, քրոնիկը կը մըռտլանենք՝ իրենց սիրուն ձեւին ու սրամիտ դարձուածքներուն համար. բայց ամէնէն թեթեւ ու զուարճալի ոճով գրուածքն անգամ՝ միշտ fond մը կու-նենայ, տգեղ բարձր մը, գռնհիկ սովորոյթ մը ձաղկելու կը ձգտի: Այս եղած էր ուղ-լութիւնը մեր ամէնէն մեծ երգիծաբանին՝ Յակոբ Պարոնեանին: Իր հետեւորդներէն ա-նոնք որ տարբեր ճամբու մը կը հետեւին, ուրիշ հորիզոններու մէջ թափառելով, ու տարբեր ճաշակներ երեւան կը բերեն, կրնան դարձեալ խնորժով կարդացուիլ՝ իբրեւ հա-ճելի ժամանց մը, — ինչպէս Մասիս ալ հիւ-րընկալած է այդ կարգի գրուածքներու լա-ւագոյնները: Բայց, այն վայրկեանէն որ ի-րենց espritն ու զբօսալի գրիչը դարձնել կը փորձեն՝ մամուլին ու հանրութեան համակ-րանքը վայելող անհատի մը ու երկուքէն հաւասարապէս գնահատուած ձեռնարկի մը դէմ, — ինչպէս են՝ օրինակի համար՝ Տիար Թաւշանձեան և իր հաստատած հակալքողա-կան պայքարը, — այն ատեն կը հարկադրու-ինք մտերմաբար ըսելու իրենց. «Լաւագո՛յն է, օրիւլի Պարոններ, որ դուք մնաք ձեր սիրային արկածներու, համբոյրի պատմու-թիւններու և ժիւրի նկարագրութիւններու սահմանին մէջ. ձեր սրամտութիւնը ու գրչի հեգնանքը անկէ անդին մի՛ անցունէք, սա-կայն»:

ԵՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Ս. Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Տ. Բարթոլոմէոս և Տ. Մեսրոպ Սրբազան-ներու և գործակատար Արիս էֆ.ի՝ շաբաթ օրը Կայս. Պալատ գնաց և յոտս Կայս. Դա-

հոյից մատոյց Եպիսկոպոսաց կողմէ պատրաս-տուած հաւատարմական ու երախտագիտա-կան Ուղերձը: Ն. Ամենապատուութիւնը և իր հետեւորդք՝ Ա. Քարտուղար Բարձր. Թախին փաշայի միջոցաւ արժանացան Կայս. բարեւներու և մեծարանաց:

Խաչի տօնը մայրաքաղաքիս բոլոր եկե-ղեցիներուն մէջ տօնուեցաւ աւանդական հանդիսաւորութեամբ և երկօք բարեպաշտ ժողովրդեան ներկայութեամբ: Ս. Պատրի-արքը, յատուկ հրաւերով Սկիւտարի միացեալ երեք թաղերու Թաղ. Խորհուրդին, Կիրակի առաւօտ պատարագեց Ս. Խաչ եկեղեցին ու պերճախօս քարոզ մը խօսեցաւ՝ թէ՛ թաղա-յին կրթական ու մատակարարական գործին միացման և թէ՛ օրուան կրօնային տօնին վրայ: Եկեղեցական արարողութիւններէն ետք՝ Ն. Ամենապատուութիւնը թափօրով առաջնորդուեցաւ Թաղ. Խորհրդարան որուն դրան առջև սրտագին մաղթանքներ ըրաւ Վեհ. Կայսեր արեւշատութեան համար. ներ-կայ խումուն բազմութիւնը «ամէն»ներով ձայ-նակցեցաւ այս բարեմաղթութեանց:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Կայսրը բարեհաճած է Իււլայի երկրորդ աս-տիճան շնորհել՝ Տպագրական Տեսչութեան օգնականներէն Վսեմ. Ապտիւլ Վէհապ պէյի, որ նոյն Տեսչութեան կարող և արժանաւոր պաշտօնատարներէն է, և իր հմտութեամբը, կարողութեամբը ու ազնիւ ձիրքերովը՝ բո-լոր զինքը ճանչցողներուն համարումը ու համակրանքը կը գրաւէ: Կը շնորհաւորենք Ապտիւլ Վէհապ պէյը Կայսերական բարձր գնահատման արժանացած ըլլալուն առթիւ: Նոյնպէս կը շնորհաւորենք Տպագրական Տեսչութեան երրորդ միւլմէյիդ Նայիլի պէյը որ արժանացած է Միւթէմայիդի աստիճանին, արձանագրութեանց դիւանապետի օգնական էսատ պէյը՝ որուն շնորհուած է Դ. կարգի Օսմանիէ պատուանշան և քարտուղարներէն Բաղդապ պէյը որուն շնորհուած է Դ. կարգի Մէճիտիէ պատուանշան:



ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇՍՏԱԿՆԵՐ)

Լոյսը մարած ըլլալով, սենեակը մթու-
թեան մէջ էր և Վահան վարդապետ կը նիր-
հէր, և ահա՛ կը դարձնու գիւրտուքէ մը և
մեղմ ձայնէ մը որ կ'ըսէր. «Ես եմ»:

«Ո՛վ էք»:

— Յուսիկը:

«Անոր համար սուսիկ մը սենեակէս ներս
մտար և ի՞նչու»:

— Մօ, ես Հայր Յուսիկն եմ, անունս ալ
դոնէ չե՞ս լսած:

«Յուսիկ—Սուսիկ չեմ գիտեր, չեմ լսած,
հա՛, կը յիշեմ Յուսիկ մը, որ Կաթողիկոս էր,
1700 տարի առաջ վախճանեցաւ. հիմա յար-
եա՞ւ»:

— Ան եմ, ան չեմ, միայն սա գիտեմ
որ Յուսիկ մը հին ատեն Հայրապետ եղած է,
իսկ ես բան մը եղած չեմ, մինչդեռ գլխիս
մէջ խելք կայ և բերնիս մէջ լեզու:

«Չարմանք. խելքն ու լեզուն աննշա՞ն
կընեն մարդը»:

— Նախանձը որ լեզուիս և խելքիս դէմ
կայ, զիս նկուն և լքուն ըրած է, որ ա՛լ ստիպուած
եմ լռակցայ ըլլալ և Յուսիկ անունս ալ Սու-
սիկի փոխել: Իմացա՛ր. բայց դուն խելք
ունի՞ս:

«Չեմ գիտեր»:

— Ունենայիր նը, հոս չէիր գար: Լեզու
գիտե՞ս:

«Ի՞նչ լեզու»:

— Ռրանսերէն գիտե՞ս:

«Ոչ»:

— Իտալերէ՞ն:

«Ոչ»:

— Լատիներէ՞ն ալ չես գիտեր:

«Եւրոպայէն չեմ գար կոր, որ Լատինե-
րէն գիտնամ»:

— Ի՞նչ որ այս լեզուներէն մէկը չես
գիտեր, ի՞նչու աշխարհք եկեր ես:

«Ի՛նչայի որ եթէ այդ լեզուներէն մէկը
գիտնալ պէտք է, աշխարհք չէի գար: Բայց
դուն այդ լեզուները գիտե՞ս»:

— Այո՛:

«Անո՛ր համար դուն հոս մարդ ես եղեր»:

— Այո՛:

«Բայց դուն բան մը հասկցա՞ծ ես այս
աշխարհքէն»:

— Հասկնալու չհասկնալու բան չկայ. բա-
րեկամ, ես աշխարհք եկած եւ այս լեզու-
ները ուսած եմ, միմիայն սա խօսքը արտա-
սանելու համար. վե՛ցի. վիճի՛, վիճի՛:

— Ուրեմն Լատիներէն գիտես. ֆրէնկէ
դաս տալը գիտե՞ս ո՛րքան դժուարագաթան
գործ է, գիտե՞ս որ դժուարակնճիռն լեզու
է իտալերենը, և այդ լեզուները խոթել թըխ-
մել տեղաւորել սրկէ նըկէ ժողովածու ան-
տալ գլուխներու մէջ...:

«Պուրղոյով դիւրին է»:

— Կատակը մէկդի՛. դուն կնճելդ նայէ. ես
փարջ մը օղի բերած եմ որ խմես և միայն
մտիկ ընես:

«Կենդանութի՛ւն ուրեմն»:

— Անուշ անմահութիւն. բայց քանի որ
լեզու չէիր գիտեր, հոս գալու չէիր:

«Ես կնճելու եկած եմ հոս»:

— Անուշ ըլլայ, գիտե՞ս ի՞նչ ըսել է վեցի,
վիճի, վիճի:

«Եկի, տեսի, յաղթեցի»:

— Ուրեմն ոչ թէ միայն Լատիներէն, այլ
հայերէն գրաբար ալ գիտես եղեր:

«Ինձի՛նայէ, Սուսիկ աղբարս, Դպրեվանքի
ուսանողներուդ այդ լեզուները դաս կուտա՞ս:

— Այո:

«Անոնք սիրով կ'ունենդրե՞ն քեզ»:

— Այո:

«Իրենց ուսած դասերէն դո՞հ են»:

— Այո:

«Ինչէ՞ն գիտես»:

— Ինչ որ կ'աւանդեմ, կը լսեն ու կը
պահեն:

«Ո՛ւր կը պահեն, իրենց նեպի՞ն մէջ թէ
սոպրաբի մէջ»:

— Կատակը մէկդի՛. միտք կը պահեն, ինչ
որ կը լսեն ինէ, որ զրուցեն, երբ հարցուի:
«Չհարցունեցա՞ւ մինչև հիմա բան մը ա-
նոնց»:

— Հա՛. ծարն ենք ծրարոցին, եռամսեայ

քննութեան օրը, որ երէկ էր, երբ վերատեսուչ Սրբազանը սկսաւ հարցումներ ընել Օլեկսոբժէն և եւրոպական խթուառէն, ուսանողներու ամէնքը, այս նշովից արմատները, մէկ բերան ուրիշ մէկ խօսք չպատասխանեցին, եթէ ոչ այս միակ խօսքը. «վէնի, վիտի, վիչի», զոր կրկնեցին, երեքկնեցին, չորեքնեցին և...

«Վերջը» :

— Օրմանեան Սրբազան, ինծի ծուռ ծուռ նայելով երբ կը մեկնէր, ետեւէն պոռացի. «Ի՞նչ խոռ խոռ կը նայիս. գոհ չե՞ս ըլլար, որ այսքան կարճ ժամանակամիջոցի մէջ ես աշակերտներուն կը սորվեցնեմ լատիներէն» :

«Եւ վերջը» :

— Այսօր լսեցի որ Պահլէճիկէն Դուրեան վարդապետը պիտի բերուի, որ ինձ փոխանակէ. թող գայ ան, ու թող խերը տեսնէ Դպրեվանքին ալ, իմնամակալութեան ալ, վերատեսուչութեան ալ, խլէ-պլէ այս դպիր — ընծայացուններուն ալ :

«Բայց դուն ի՞նչ պիտի ընես» :

— Կը հիւսեմ :

«Հիւսե՛լ, ի՞նչ հիւսել» :

— Ի՞նչ կը հիւսեն. — չուան : Չե՞ս յիշեր որ Պօղոս առաքեալ վրան — չասքը կը չինէր, Տէրն մեր Յիսուս, ինչպէս կ'աւանդուի, հիւսն, օրհնէր էր, ես ալ արհեստով հիւսող եմ : Կը տեսնե՞ս, անունիս հնչիւնին մօտիկ արհեստի մը գիւտն եմ ըրած. անունս Յուսիկ, արհեստս՝ Հիւսիչ :

«Աղէկ. բայց...» :

— Բայց — մայց չկայ, դեռ Դպրեվանքը չհաստատուած երբ լսեցի թէ այս վանքը այրուեր է, վանահայրը Պատրիարք եղեր է, վանքն ամայացեր է, ես հոս եկայ սուսիկ — փուսիկ, հիւսող գործիներս տեղաւորեցի մեծ-ախոռին մէջ որ պարպուած էր էլէ ու գոմէլէ, ճախրակներս լարեցի, ցիցերու կապկպեցի կարճ երկայն նեղ ու լայն տախտակներ, ծակծկեցի, չուան անցուցի ծակերուն և ծակերէն դուրս ծոպեր ձգեցի : Դիւտս ի գործ դնելով՝ մէկ ժամուան մէջ 140,000 չուան քառասուն արլըն չափով պիտի արտադրէի, այլ սակայն օր մը...

«Ի՞նչ եղաւ, գործիներդ չբանեցա՞ն կամ կորորեցա՞ն» :

— Ոչ, ա՛լ աւելի գէշ. չուանները կնճռեցան և ես չուաններու ցանցին մէջ ըլլաւ նուեցայ, կաշկանդուեցայ, կասկարմիր, այլանդակ եղած, խեղդուկ խեղդուկ ձայն կը հանէի, որ օգնութիւն մը ըլլայ և ահա ի՞նչ լսէի, սա մեր խեղուկը...

«Խեղուկն ո՞վ է» :

— Շուշտակը, Արսէն վարդապետը, վեր ու վար կը վազէ, կը կանչուրուտէ, դեւի պէս կը հեւայ կը փռնգտայ, կը փրփրի կը լորձնոտի, կը խռկայ կը խռնչայ, կը պոռայ. «Հայր Յուսիկը դայպ եղեր է, երկու օր է ժամ չգար, Սաղմոս չկարդար, — կեանքիս մէջ ժամ գացած՝ Սաղմոս կարդացած ըլլամ. — սենեակին դուռն ալ բաց է. հոն ալ չկայ : Կորստագիւտ Սուրբ Մինասի պատկերն ալ չկայ, որուն առջեւ մօմ վառուի, որ գըտնուի հայր Յուսիկը, սուրբ Սուսիկը : Վայ, նորեկները — Դպրեվանքի տիրացուները — գողցած ըլլալու են Սուրբ Մինասը, որ անոր առջեւ լոյս չվառուի ու չգտնուի Հայր Յուսիկը, սուրբ Սուսիկը, վայ՛ վայ՛» :

«Խեղք չէ՞ր ընել չուանի գործարանդ մտնել և զքեզ գտնել» :

— Խեղք ունէ՞ր անխելքը, իբր թէ զիս կը մեղքընայ, զիս կը վիտուէ, բայց զիս խաղք խայտառակ կ'ընէ :

«Վերջը» :

— Վերջը լուսարար աղջիկ — Մինաս խելք կ'ընէ, վանք — վանականներ կը ժողվտէ, կը հաւքտէ. իսկոյն գործարանս կը խուժեն, չուաններս կը կտրտեն և զիս առօք — փառօք Օրմանեան Սրբազանին առջեւ կը տանին, որ նոր եկած էր Դպրեվանքը բանալու : Ան ալ իմ բոլոր մեղքերուս վրայ մեղք մըն ալ աւելցուցած ըլլալու համար՝ զիս իրեններուն իտալերէնի և Ֆրանսերէնի դասախօս կը կարգէ : Բայց հիմա ա՛լ վանքէ վանակա՜նութենէ կը հրաժարիմ. և ուրիշ տեղ կ'երթամ հիւսելու նորէն :

«Ո՛ր արդեօք կ'երթաս հիւսելու» :

— Միտքս սա լեռնէն վար իջնել, օվան չափել, Իզմիտ մտնել, Սաաժպուլը գտնել է :

Եւ իրաւ Ստամպոլը գտաւ այս մարդը :
Սամաթիայի, Խասքէօյի, Պալաթի և ուրիշ
մանր մունր ժամերու քարոզիչ եղաւ, այլ
քարոզը կարճ, հասակը կարճ, ձայնը նուաղ,
չունչը նուաղ ըլլալուն համար տեղ մը չկըր-
ցաւ տիտիկ ընել, և հիմա հոն է ուր էր եր-
բեմն, Ատաբազար :

«Հոն կը հիւսէ» :

— Ո՛չ :

«Հապա ի՞նչ կ'ընէ» :

— Կը սպասէ որ դպրեւանքի աշակերտ-
ներէն գոնէ մին գայ և իր աջը համբուրէ
ըսելով, «Վէնի', վիտի', վիչի'» :

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ—ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՆՍԵՐ

(Ք Մ Ա Յ Ք)

Կը հըրճուին լոյսերն հորիզոնին մէջ.
Երկինք համբոյրի անհուն մ'է կապոյտ :
Ամառն երբ անցնի՝ աշունն է անվերջ .
Ես դեռ չեմ սիրած սիրով մը անփոյթ :

Երկինք համբոյրի անհուն մ'է կապոյտ
Որուն՝ ցաւագին աչերս կը յառին ,
Ամէն անգամ որ երկինքն աչքերուդ
Կըցէ յիշատակ մ'հոգւոյս քընարին :

Ամառն երբ անցնի՝ աշունն է անվերջ .
Եւ սուգիս առեն — հո՛ւր անդրադարձում —
Յաճախ կը տըրտմիմ — յոյսեր սըրտիս մէջ —
Անուրջի մ'առջև, կիզի՛չ հըսկանցում :

Ես՝ դեռ չեմ սիրած սիրով մը անփոյթ՝
Վէնի՛ւսն օ՛հ, գուցէ... այլ բընա՛ւ՝ Սաֆօն .
Սիրոյս իտէալն է պերճ բայց անգո՛ւթ,
Ինչպէս արեւն որ կ'այրէ հորիզոնն...

Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ՀՈԳԻԻ ԷՁԵՐ



ՍԵՐԸ



Բ.

Յեղակարծ պատահար մը սակայն, որուն ընաւ չէր սպասեր և որով չէր կրնար մտա- հոգ ըլլալ երբեք, խռովեց կեանքը Մանօի, և զինքը ամէնէն անհանդուրժելի փորձու- թիւններուն մատնեց:

Իրենց կայքէն դրկից կին մը, գիշեր մը եկեր էր Մանօի մօրը, խնդրելու համար անկէ որ, իր աղջիկը, Շամէ, որ ա'լ սկսեր էր ճլտորիլ քիչ մը ու ռոքերը սկսեր էին հաստատ քայլեր առնել, ընկերացնէ Մանօի, մէկտեղ քաղաք երթալու համար, ուր սոր- վեցնէ անոր՝ իրեն պէս ապրուստ մը հայ- թայթելու եղանակը, մուրալու արուեստը: Բնական բան մը կ'երեւար այս միջոցին զի- մե՛լ՝ որչափ այդ կնոջ, նոյնչափ միւսին: Տը- ղուն մայրը քիչ մը մտածեր էր այս առա- ջարկին վրայ, և, նախկին փորձ աշխատա-ւոր Մուրացկանութեան Դպրոցին, գուշակե- լով յոռի հետեւանքը՝ որ պիտի ծագէր ատկէ իր տղուն համար, նախապէս դէմ կեցեր էր այդ գաղափարին, սակայն կարգ մը ուրիշ նկատումներու համար, տեղի տուեր էր ետ- քէն, ընդունելով որ յաջորդ օրը իսկ երկու պզտիկները մէկտեղ երթան քաղաք, ու Մանօ աղջկան սորվեցնէ ի'նչ որ պէտք էր ընել:

Մայրը հաւանութիւն յայտնելէ ետքը, Մանօ չէր կրնար անպատեհութիւն մը նշմա- րել այդ ընկերակցութեան մէջ, որով սիրա- յօտար յանձն կ'առնէր յաջորդ առտուն ըն- կերով մը ճամբայ ելլելը, մանաւանդ տա- րասեւ ընկերով մը, որովհետեւ, էհ, գիտ- նա'նք որ՝ տղոց սիրտն ալ կը բարախէ այն մեծ սարսուռով՝ զոր Սէրի կայծը կը բռնկ- ցնէ հոգիներու մէջ:

Փոփոխումը կեանքի այդ միօրինակու- թեան, որմէ տաղտկացած էր ա'լ մուրացիկ աղքեկը երկու տարիէ ի վեր, նոր ոգեւորու-

թիւն մը բերաւ իր վրայ, ու յաջորդ օրը, խնդում—երես ու կայտռելով, երկու գեղ- ջուկները, ձեռք ձեռքի, ճամբայ ինկան դէպի քաղաք:

Այդ օրը շատ երջանիկ կըզգար ինքզինքը Մանօ, ու այն փոշոտ երկա՛ր ճամբան, որմէ հոգեւին զգուած էր, և զոր քալելով քալե- լով չէր կրնար հատցնել իր բոպիկ ու ման- կական տոտիկներովը, հիմա այնչափ երկար չէր երեւար իրեն, ու հաճոյքով կը վազվզէր անոր երկայնքին, խօսակցելով իր նոր ըն- կերուհիին հետ, անոր բացատրելով նորնոր բաներ, չգիտցածները սորվեցնելով ու չտե- սածները ցուցնելով: Երբ քաղաք մտան, Մանօ շատ բաներ պատմեց Շամէի, որ ապ- շահար կ'ունենդէր ու լսածները իր տղու երեւակայութեան մէջ կը խոչորցնէր, ու կը չլանար, կը յափշտակուէր անոնց իրեն առ- թած հմայքէն: Հոն սակայն, Մանօ, ընադ- դաբար մենամուլ դարձած իր մուրիկի հե- տապնդումներուն, մոռցաւ պահ մը իր ըն- կերուհին, նուիրուելու համար իր առօրեայ զբաղումին: Աղջիկը, իր առաջնորդին քը- ղանցքը չի ձգելու ճիգերով, ու վախով թէ կրնայ կորսնցնել զայն, կը վազվզէր անոր ետեւն ի վեր, իր անվարժ սրունքներուն բոլո՛ր ուժովը:

Առջի իրիկունը, աղջիկը բան մը չկրցաւ տանիլ տուն, բայց ատոր համար չէին կրնար կշտամբել զինքը: Մայրը վստահ էր որ աղ- ջիկը օր մը յաջող վաստակոր մը կ'ըլլայ, որովհետեւ աղւոր աշուրներ ունէր ու դիմա- զիծերու յանկուցիչ գեղեցկութիւն, ինչ որ մուրացկանութեան արուեստին մէջ մեծա- գոյն դրամագլուխներ են: Ու իրաւ, աղջիկը օ՛ր օրի սկսաւ փայլուն քայլեր ցոյց տալ, և իր վրայ դրուած ակնկալութիւնները պը- սակել չլացուցիչ արդիւնքներով: Ի՛ր տեսքը չէր կրնար անուշադիր մնալ անցորդներէն, —ա՛յնչափ սիրուն էր երեւոյթը ու գրաւիչ էին իր շարժումներն ու աղաչական մանկու- նակ ձեւերը: Խորապէս արտայայտիչ ու վը- ճիտ կապոյտով մը փափլուն իր աչքերը արտասովոր շնորհք մը կուտային իր կըր խատուաթիկ դէմքին, որ խարտեալ մաշերոջ

անխնամ և ունի լի վար թափուած խորձովը չըջանակուած, դարտուղի թովչութեան մը գեղովը կ'աղւորցնէր թշուառութեան ու սգեղութեան բոյնի այդ զաւակը:

Մանօի դեգերած փողոցներուն մէջ, հիմա իրմէ աւելի ան էր ուշադրութեան ու հոգածութեան առարկայ, և անցորդներ չէին կրնար աննշմար անցնիլ քովէն թշուառութեան այդ գոհին, որուն տեսքը իրենց սիրտը կը շարժէր, ու ամէնէն կարծրասիրտները անգամ կը տկարանային իրենց անողոքութեանը մէջ, վարձատրելով զինքը այն խնդրանքին մէջ, զոր ա'յնչափ սրտագրաւ կերպով կ'ուղղէր հանդիպող անցորդին, ակնարկը անոնց աչքերուն սեւեռած, ետեւնուն առջեւնուն ոտոտտելով, ետ մնալով, առաջ անցնելով: Մանաւանդ տարէց կիներ, չէին կրնար զսպել իրենց խանդաղատանքը, ու, յաճախ, — թերեւս զաւելի մը կարօտովը տոջորուող կարօտակէզ մայրեր՝ — անոր ափը լիառատ պարզեւ մը սահեցնելէ ետքը, կը չօքէին, իրենց մարմինը անոր հասակին հաւասարեցնելով՝ զայն գգուելու համար իրենց կուրծքին վրայ, շոյեւու համար փայլուն աղւոր մաղերը, որչափ ալ անոր կեղտոտ երեւոյթը պժգանք աղղելու բնոյթը ունենար:

Հիմա յաջողութեան ճամբան գրկած էր, և մեքենաբար ուսած ի'նչ որ պէտք էր իր դիմումները արդիւնաւորելու համար: Մայրը գոհ էր որ աղջկանը հրապոյրները լաւագոյն կերպով կը շահագործուին, ու պղտիկը, քաջալերուած քիչ ատենուան մէջ ձեռք բերած իր յաջողութիւններէն, չլացած դրամի հատիկներու տեսքէն, ու մանկական գոհունակութիւնով թէ անոնցմով մայրը կը հըրձուեցնէր, կը կրկնապատկէր հետզհետէ իր ջանքերը, կ'ոգեւորուէր:

Սակայն Մանօ աղէկ աչքով չէր կրնար նայիլ այս բոլոր անցած դարձածին: Ընկերուհիին յաջողութիւնները ո'րչափ փայլ ստանային, ա'յնչափ կը սկսէին նուազիլ իր հասոյթները, և կը տեսնէր որ, իրեն տալ սովորած բոլոր մնայուն իր ողորմատունները, հիմա կամաց կամաց կ'անցնէին միւսին, չէ'ր

գիտէր ի'նչ անբացատրելի ու գաղաւաղից պատճառով: Շատ անգամ ինք էր որ լեզու կը թափէր, կը յօգնէր, կը պաղատէր, և կը տեսնէր որ՝ մի'ւսը կը տիրանար նուէրին: Յափտակել անոր ձեռքէն՝ չէ'ր ըլլար, որովհետեւ աղջիկը կը պոռար բոլոր ուժովը, և անցորդներուն միջամտութիւնը կը հրաւիրէր: Քանի մը անգամ ամայի տեղեր ուղած էր փորձել այդ ձեռնարկը, բայց նորէն չէր յաջողած, որովհետեւ սատանորդի աղջիկը, իր խելքէն վեր մտածումը ունեցած էր՝ դրամները տեղաւորելու մինչև պորտին վրայ, զգեստին ներքնակողմէն կախուած քսակի մը մէջ, և եթէ ակուններն ալ քակելու ըլլար՝ չէր կրնար առնել, ա'յնչափ ամուր կը փարէր իր պղտիկ հարստութեան, կը սեղմէր զայն տղեկի տկար ձեռքերուն բոլոր ուժովը: Ճամբան ալ չէր կրնար ընել այդ բանը, քանի որ մօրը լուր տալու վախը կար, ինչ որ մեծ գայթակղութիւն կրնար առաջ բերել երկու գրկից տուններուն միջև:

Անհանդուրժելի էր կացութիւնը Մանօի համար, ու ընդվզեցուցիչ: Իր թափած քրօտինքներուն, իր ցանած սերմերուն պտուղը հիմա ուրիշ մը կը քաղէր անխնայօրէն ու ինք գրեթէ բացը կը մնար: Հասոյթները սկսեւ ինչ հիմա քիչնալ, ու քանի մը անգամ դրամը պակաս գալով, մօրը սպառնալիքները սաստկացեր էին, ու պատիմները շատ կսկծալի էին եկեր սիրտին, քանի որ անձնագէտ յանցանք մը չուներ ինք:

Ըմբռնումներուն հետեւանքով այն բնակչութեան՝ որուն կը պատկանէր, բաժնուիլ ալ չէր կրնար իր մրցակիցէն. ատիկա կրնար իրենց գրկիցներուն զայրոյթը գրգռել, ու պարսաւի, լուտանքի հոսանք մը հրաւիրել իրենց վրայ:

Տաժանելի էր այս կացութիւնը, և ո'ր և է կերպով փրկութեան ճամբայ չի կար Մանօի համար, որ խոր ատելութիւնով մը կը լեցուէր հետզհետէ՝ հանդէպ միւսին, ու կը չարչարուէր այդ զգացումին իր ներսը արթնցուցած կիրքերէն: Կ'ուղէր թօթափել վրայէն, զինքը ընկճող պատուհասը. չէ'ր կրնար: Այդ զայրոյթը, այդ ատելութիւնը

հետզհետէ կը մեծնար իր մէջը, ու կը կրծէր հոգին, անհուն տազնապի մը մասնելով իր դիւրարեկէտութիւնը, որ կը ճնշուէր ծանրութեանը տակ զինքը խոշտանգող հարուածին: Միտքը կը հալուածուէր, գիշեր ցորեկ, ուր ուսականովը այդ աղջկան, որ իր երջանկութիւնը խանգարեր էր, իր բաղդը պղտորեր էր: Կը տուայտէր սուր վիշտովը հոգեկան այդ խռովքին, ու անհուն տանջանք մը, որ օր օրի կը մեծնար իր մէջը, կը լկէր զինքը չարաչար, իր ծիծաղկոտ օրերը դժբաղդութեան սև տեսիլի մը փոխակերպելով:

* *

Այն օրերը, երբ իրենց յաճախած փողոցները ամայի կ'ըլլային, երկու պզտիկները կողմնակի թաղերու մէջ կ'ուզէին իրենց քայլերը, հո'ն դեգերելու, և հո'ն որսեր որոնելու համար, իրենց հոտառու քիթով: Պատահաններու առջև թառող տիկիներու առջև, փողոցը, միմոսական խաղեր ալ կ'ընէին երբեմն ու լիառատ կը վարձատրուէին, որովհետև տիկիները մեծ հաճոյք կըզգային այդ թիզ մը հասակով պղտիկներուն խեղկատակութիւններէն ու պղտիկ երգերէն, մանաւանդ աղջկան ըրածներէն, որուն երեսէն Մանօ ալ պակաս չէր մնար նպաստաւորութիւն:

Այն օրը երբ թափուր գտած էին փողոցները և ուղղուած թաղերը, մէկ քանի զուարճալի ոստոստումներու համար, զոր Շամէ ա'յնչափ շնորհալիօրէն կատարած էր, անուշեղէնի խոշոր պատառ մը ելաւ իրեն, տունէ մը: Բայց անոր երկնցուած ատեն, Մանօ անմիջապէս նշմարելով զայն, ու չկրնալով դիմադրել անոր տեսքին, սուրաց ու յափըշտակեց, երբ աղջիկը դու չէր տեսած: Բայց կռիւը բրթաւ անմիջապէս, որովհետև աղջիկը կը պնդէր իր իրաւունքին վրայ: Տեղի չէր տար տղան, ո'չ մէկ սրտաշարժ խօսքի, ո'չ մէկ բռնութեան. փորը անօթութեանէ կը խօսէր արդէն, ու ոչի'նչ կրնար ողորդել զինքը: Բիրտ հարուածով մը մէկդի հրեց աղջիկը, որ աղիողորմ լաց մը ձգած, մրոտ դէմքն ի վար, ոտքերը գետին կը դարնէր ու կը ձգէր: Այդ լացը ան-

ճառ հաճոյք մը կը պատճառէր Մանօի, ու կը սրէր ախորժակը: Դնաց առանձնացաւ մօտակայ արեւոտ կատարի մը վրայ, զոր աղբի կոյտեր կ'եզերէին, ու սկսաւ մեծ պատառներով խածատել անուշեղէնը, ախորժակ գրգռող չիրտուքներ արձակելով շրթունքներէն:

Շամէ, դէմը նստած, իր լացը կը խորհար, գթաշարժ աղերսանքներով.

— Ի'մա էր աղ... տո'ւր... տո'ւր...

Սառնական անզգածութեան մը խորխորջութիւնով՝ տղան կը շարունակէր ճաշակել անուշեղէնը, ու կէս կ'ընէր:

Լացը դադրեցուց աղջիկը, ու աչքերը, այն յուզումով ու դիւթանքով, զոր կինը ունի մեծ վիշտերու մէջ, սեւեռեցան տղուն վրայ:

Մանօ խռովեցաւ այդ նայուածքէն, ու զգաց որ բան մը կը փլէր իր մէջը, տեղի կուտար, կը քայքայուէր, փոթորկելով իր հոգին, ու անձանթ նարսուռի մը հեշտանքովը ցնցելով իր էութիւնը: Ատելութեան բիրտ չէնքն էր որ կը փլէր իր մէջը, ուժին տակ Սէրի մեծ Զգացումին, որուն իր կուրծքին խորը զարթնումը՝ կ'ողողէր իր սիրտը ու կը տիրապետէր հոգիին վրայ:


Անհուն ղեղումովը կոյս խանդաղատանքի մը, որ կ'ալեկոծէր հիմա ամբողջ իր էութիւնը, մօտեցաւ անոր՝ որ առաջին մեծ խռովանքը ճառադայլած էր իր հոգիին մէջ, ու թեւ օղակ շինելով անոր քնքուշ գլխուն շուրջը.

— Ես կատակ ըրի, աղւորս, չե'ս գիտեր, — ըսաւ, — սրտազեղ համբոյրի մը կրակոտ սարսուռը հպեցնելով անոր այտերուն:

Ու շրթունքը երկար հպած մնաց, զարթնումի կոյս հեշտանքի մը մէջ, ակնարկը դամուած այն աչքերուն, ուրկէ Սէրի մեծ յուզումին ուժը ցայտեր էր, և որմէ ցնցուեր էր Տղա-Մարդը:

ՅՆՈՎ. Բ. ԱՐՄԷՆ

Վ Ե Ր Զ



ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

Յունիս 21ի առաւել էր:

Դիւերուան խտաւունքն է փոյի անձրեւող քամին զով ու մեղմիկ զեփիւռի մը փոխուած էր: Աղամամութիւն հաղիւ կը լուսաւորէր արդէն ամայի փողոցները, երբ մեր ձիերը քառատրոփ կը բաժնուէին Կալիւկադնոսի ափունքէն: Դադաքին վրայ անգամ մըն ալ կը նայինք, ու կը մտաւեցնէր մեր ձիերը, տաքը դեռ մեզի չդարպասած՝ եղելիններու անատուր մտնելու համար: Մեր ուղեկիցներուն հետ կ'անցնինք ընդարձակ գերեզմաններէ, և ժայռոտ՝ ապաւեր կածաններէ սողոսկելով կը բարձրանանք Ագլայիբի դիկղակող բլուրը: Երբ կը հասնինք բլուրին գագաթը՝ մեր ուղեկիցները իմ ուշադրութիւնս կը դարձնեն դէպ ի վար: Մայրիներու հոտաւէտութիւնով մեր հոտաւութիւնը լեցուած, ձիերուն գլուխը դէպ ի վար կը դարձնենք: Իրաւ որ կ'արժէ անգամ մը լրջօրէն դիտել այդ չըջապատկերը, որ մեր ոտքերուն տակ կ'արթննայ առաւելան կենդանի բոսորային աւելին ճառագայթներուն տակ, անկողնէն ելլող դիցունիի մը պէս: Մոխրագոյն մշուշները մեղմօրէն կը շոգիանան արեւին հուր նայուածքին տակ, որ ծովերէն կը ծնի: Ոչ մէկ աղմուկ՝ պղտորելու կամ խանգարելու համար արթնցող առաւօտին կուսութիւնը, և ոչ մէկ ալիք չի կոծեր ափունքին վրայ: Փարոսը դեռ կը վառի Սարպետոնի հրուանդանին լեզուին ծայրը, բայց կտուցի մը պէս: Մովին կապոյտը կ'երփնեմանքի, կը ծիրանազօծի, և մեր աջակողմը արեւէն կը վարվառի՝ ծովի կապոյտին ծոցը, այն հսկայ, երկնզած քարաժայռ կղզին, որ պատմութեան մէջ ծանօթ է «Փափատուլա» անունով, և որ մին է «Թիթեռանց կղզիներ»էն, (այժմ Գէչէ Ատասը): Բնութեան այդ հանդարտ հրաշալիքը հիանալի է և մեր չուրջը կը դիտենք մայրիներու, եղելիններու և գիհներու մշտակապոյտ աղուամաղբերուն և դափնիներու թաւ դաւարին վրայ աղամանդ ցօղերը, որոնք արեւ-

ուն ճառագայթներուն տակ լուսարձակ. կը նմանին անգին մարգարիտներու:

Փամպուդ-Մէյտանի կոչուած լեռնադաշտակին վրայ վերջին հրաժեշտը կուտանք մեր ուղեկիցներուն և կը բաժնուինք իրարմէ: Լեռներու այդ ամայութեան մէջ, ուր մեր ճամբուն վրայ ափ մը հող չկայ, ձիերը կայծեր կը հանեն իրենց կոխկրտած քարերէն, որոնք կը չլին անոնց ոտնատրոփէն և երկու ժամ յետոյ կը բաժնուինք հասարակաց ուղիէն, նեղ ճամբով մը դէպ ի անտառը մտնելու համար: Ուղտերը՝ Գարամանի իրենց ճամբորդութենէն յոգնած, ճամբուն եզերքը նստած՝ իրենց ծնօտը կը շարժեն, ու հետաքրքիրի պիչ նայուածքով, կը դիտեն մեր անցըը, մինչ անոնց կշտին իրենց բուրդը մանող հրաչեայ՝ կիսավայրենի ուղտապանուհիները, իրենց գլուխը կախած, լուսնիստ ճգնաւորներու անհոգ ու անտարբեր կեանքը կը ցուցադրեն մեզի: Մեր շեղումէն մէկ ու կէս ժամ յետոյ ինքզինքնիս կը գտնենք քարակոյտի մը առջև, որուն վերեւ աշտարակ մը կը բարձրանայ: Հապճեպով կ'անցնինք քարերու շերտերու վրայէն, մեր աջակողմը թողնով քաղաքին քարաբլուրները և կ'երթանք դէպի առաջ, ուր հսկայ քառակուսին դէպ ի վեր կ'ամբառնայ, Ուղունճա-Պուրճի դամբանական կոթողին, և ուր կորնթական սիւններու ցրբուն ցցունքները դիւթական պատկեր մը կը յորինեն մշտադալար թփաստաններով շաղապատուած: Կ'անցնինք Ուղունճա-Պուրճ գիւղին ստորոտը երկարող հովանուտ ձորամէջէն, կ'ելենք փոքր բլուրը, և ինքզինքնիս կը գտնենք աղտոտ գիւղին մէջ: Հնութեան շէնքերը այնքան հոյակապ ու տրուեստոտ, իսկ գիւղին նորաշէն տունները որոնք բնութեան սրբատաշ քարերով կառուցուած են՝ գետնայարկ և անարեւստ:

Կ'երթանք դէպ ի արեւելք, դիտելու վաղեմի քաղաքին ամփիթէատրոնը, որուն հիւսիս-արեւելքի աշտիճաններէն ութ հատը դեռ անեղծ կը մնան: Տեղացի Թուրքեր մեղի ցոյց կուտան ամփիթատրոնի հիւսիսա-կողմը կորնթական սիւններու խոշոր բեկորք-

ներու քով, հողէն դեռ նոր հանուած մա-
քուր մարմարէ և գրեթէ երեք մէթր մե-
ծութեամբ գեղեցիկ առնարձան մը, որուն
գլուխը դժբախտաբար չկայ վրան: Արձանին
աջ ուսին վրայ կայ կոճկուած վերարկու մը,
որ դէպ ի ձախ կ'ամփոփուի: Ունի գօտի
մը, որուն տակ գտնուող եղջերաւոր կեն-
դանիին վրայէն կը կոճկուի, և կը թողու,
որ կենդանիին գլուխն ու ոտքերը երեւին
գօտիին վերէն ու վարէն: Զրահը՝ մէջքին
գօտիին տակ, և որովայնին գոգաւոր ձեւովը
չինուած, կը վերջանայ պորտին վրայ, և իր
ձեւովը կը բաժնուի զգեստին ստորին մասէն:
Զրահին անմիջապէս կից ունի կիսաբոլոր
ձեւով զգեստին առաջին մասը, որուն մի-
ջատուած լայնեղր ութը չերտերուն վրայ
haut-relief փորագրուած են ութը կենդա-
նիի գլուխներ: Մինչև ծունկերը իջնող իր
կրկնոցին պճեղնաւոր փոթերուն ամէնքն ալ
իրենց ծայրերուն վրայ ծոպեր ունին, որոնք
կարծես թէ դեռ նոր չինուած ըլլային: Ար-
ձանին ներկայացուցած մարդը, աջ ոտքի
կոճղէն կապուած կ'երևի իր ետեւը զտա-
նուած յենարան քարին, ու նորէն աջ կողմը,
մինչև ծունկերէն քիչ մը վեր կը գտնուի
ուրիշ արձանիկ մը, նմանապէս անգլուխ:
Սոյն արձանին մէկ թեւը փոխադրուած է
Սելեւկիոյ կառավարական պաշտօնատունը:
Արձանը գեղեցիկ ճարտարաբուստ մըն է
ինքնին:

Այրող արեւին տակ յոգնած, պահ մը կը
նստինք թփուտներու հովանիին տակ, մեր
ճաշը ընելու: Վաղընջուց ջրամբարներուն
մէջ գիղուած ձիւնոտ ու սառ ջուրը ծծելէ
վերջ, նորէն կը հեծնենք մեր ձիերը, և
կ'երթանք այցելել բուն Ուղունձա-Պուրճը,
տասը վայրկեան անդին, և որ իր անունը
փոխ տուած է գիւղին և չիջակայքին: Դա-
ռասուն մէթրի չափ բարձր քառակուսի չէնք
մըն է այդ աշտարակը, սրբատաշ և խոշոր
քարերով շինուած, առանց շաղախի: Ու-
ղունձա-Պուրճի աշտարակն ալ կ'ըսուի թէ
գերեզմանատուն մը եղած է, և թէ իր պա-
րունակած տասերկու սենեակները դամբա-
րաններն են: Զանազան դիրքով և գիրերու

զանազան մեծութեամբ յունական չորս ար-
ձանագրութիւններ կան աշտարակին արեւ-
մտեան ճակատին վրայ, որոնց շարունակու-
թիւնն ու սկզբնաւորութիւնները չկրցինք
կարդալ կամ թարգմանել տալ: Այս առթիւ,
ըսենք թէ Ուղունձա-Պուրճի մօտ կը գտնու-
նուի Ուղրա գիւղը, որուն շուրջը հսկայ
քաղաքի մը աւերակները կը գտնուին:

Երբ մենք հնութեան այս աւերակներուն
շուրջը կը թափառինք, կը մոռնանք, սա-
կայն, թէ օրն իրիկուն ըլլալու մօտ է: Ուս-
տի կը շարունակենք մեր գնացքը, և ժամ-
ուան մը անտառային ձիարշաւէ վերջ, ինք-
զինքնիս նորէն կը գտնենք այն շօսէին վրայ,
ուրկէ Մարա գիւղը պիտի ելլենք:

Լեռներու բարձունքին վրայ արեւին
դրացնութիւնը, շատ աւելի խիզախօրէն այ-
րած էր մեր այտերը, որոնք հիմա կը զովա-
նան չարիչար լեռներու կաղած պարանոցէն
փչող ցուրտ հովերէն: Տեղ տեղ եղեւինները
հիանալի թփուտներ ձեւացուցած են կոնաձե-
լուրներու վրայ, արուեստական դուգաշա-
րութեամբ բուսած, և իրենց վրայ բերելով
վանականի լրջութիւն մը, ուրկէ համակ ու-
տին կը բուրէ: Անոնց կապոյտ վեղարները,
որոնք բարձունքներու անխառն սիւքը կը
ծծեն ու կը սննդաւորին, քաղաքներու ժը-
խորէն ու կենսագրաւ փոշիներէն խոյս տուող
խղճամիտ միանձուններու պէս, իրենց միա-
միտ ու դողդոջուն լռութեան մէջէն անս-
ցորդներու վրայ կը մաղեն կրօնական հան-
դարտութիւն մը: Կը դիտես որ տեսարան-
ները ետիդ-մնացեր են, թէ ծառերն ու ան-
տառները իրարու կը յաջորդեն, թէ արդէն
մօտեցած ես Մարայի: Պահ մը վար կ'իջ-
նենք Մարայի մէկ ժամ մնացած ջրաղացնե-
րուն առջև և կուշտ դադարէ մը յետոյ, կը
մտրակենք մեր ձիերը, և ժամը 10ի ատեն-
ները կը մանենք գիւղ:

Մարա նորայէն գիւղ մըն է, Սելեւկիա-
յէն 9 ժամ վեր, Դարամանի ճամբուն վրայ
և մէկն է Իչ-Իլ սանձադի կեդրոնական գա-
ղայի գիւղերէն, և ենթակայ է Այաչի միւ-
տիւրութեան: Դիւղը հիմնուած է գրեթէ
50 ասրի առաջ, Սեւ ծովու եզերքներէն

եկող հանքագործ Յոյներու ձեռքով, որոնք այսօր 45 տուն եղած են: Հայերը, որոնք 13—15 տուն կը կաղմեն, 13 տարի առաջ սկսած են գալ Հաճընէն, Կարմրիէն և Կեւսարիոյ զանազան գիւղերէն, և որոնց ամէնքն ալ առուտուրով ու արհեստով կը պարապին: Գիւղը աւելի գիւղաքաղաքի մը կերպարանքն ունի երկու բլրակներէ հովանաւորուած հովիտի մը մէջ: Ժողովրդեան նիստ ու կացը, բարքն ու սովորութիւնները քաղքենի երեւոյթն ունին, Յոյներուն և Հայերուն մօտ, և մարդ հաճոյք պիտի զգայ Մարայի այդ քաղքենիութենէն, դարպասելէ յետոյ չըջակալքի գիւղերը ուր կեանքը նահապետական է:

ՄՈՒՇԵՂ՝ ՎԱՐԴԱՊԵՏ

(Արեւելք)

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՐԲԵՅՈՒԹԵԱՆ ԴԻՄ

Վերջացնելու համար շարքը «Արբեցութեան դէմ» գրած մեր յօդուածներուն, այս անգամ ալ ուսումնասիրութեան առարկայ դարձնենք ժառանգականութիւնը:

Ժառանգականութիւն: Ի՛րապէս դարհուրելի օրէնք բնութեան, ըստ որում անիկա կը պահանջէ որ հօրը կամ մօրը մոլութիւնները զաւակները, թոռները, թոռնուհիները տուժեն:

Աւելորդ՝ որուն բնաստական, տարբարանական, բժշկական, փխտային և ընկերական տեսակէտով ունեցած ազդեցութիւնները ասկէ առաջ պարզած էինք, այո՛, նոյն այդ աւելորդ ոչ միայն մարդուն զգայարանները, հոգին, ուղեղը կ'ախտաւորէ ու կը թունանաւորէ, ո՛չ միայն գիւնովին կեանքը կը կարճեցնէ, այլ զաւակներուն կուտայ ահռելի ժառանգականութիւնը, բնութեան այդ դարհուրելի օրէնքը: Ֆրանկախտաւոր (siphilitique) ուռականաւոր (tuberculeux) ծնողքներ, հիւանդ զաւակներ կը ծնին, ըստ որում մայր մը գրեթէ միշտ իր նմանին կեանքը

կուտայ: Այսպէս գրած է Օվառ, այսպէս ըսած են նաև Քոլլէս և Փինքօ: Ոչ մէկ հիւանդութեան կամ փխտի մէջ այնքան իրաւ է ժառանգաւորութեան օրէնքը որքան աւելորամոլութեան մէջ:

Առողջ ծնողքէ սերած, առողջ մարդ մը, առանց ունէ հիւանդութեան, ազիտութեամբ կը խմէ ու կը խմէ չարունակ: Օր մը ա՛լ սովորութիւն կը դառնայ ու կատարեալ արբեցող մը, աւելորամոլութեան բոլոր նշաններով չարչարուած արբեցող մը կ'ըլլայ:

Ու օրին մէկը կ'ամուսնանայ՝ տէր ըլլալով քանի մը զաւակներու ալ: Աւելորամոլին զաւակը անկատար է և տգեղ: Տգեղ հոգի ո՛ւնի ալ, մարմն ո՛ւնի ալ: Կրնայ խեղճ զոհը ալքութեամբ մը չըլլալ, կրնայ բարի ըլլալ, բայց դժբաղդաբար իր ուղեղին վրայ կը ծանրանայ սոսկալի ժառանգաւորութիւնը, ոչ միայն աւելորամոլութեան՝ այլ մտքի բոլոր խանգարումներուն, բանականութեան անհաւասարակչութեան, ևլն. ևլն.: Քօլլէս կ'ըսէ թէ, աւելորամոլին առաջին սերունդէն կը ծնին մտքի տկարներ, բանականութեան տկարներ, չարը բարիէն զանազանելու անկարող, ստախօս, անբարոյական էակներ:

Կրթութեան չեն հասկներպիք, չեն ծոբր բարոյական կրթութեան տակ և ճիշդ ասոնց համար է որ ըսած է հոչակաւոր բրօֆէօէօր Տոքթ. Ժոզուար «Ախտը արիւնին մէջ կայ արդէն»: Աւելորամոլի սերունդներ, խմման հօր-մօր զաւակներ են յաճախ անոնք, որ հակառակ իրենց տրուած մաքուր կրթութեան, խնամքներուն, օր մը յանկարծ՝ իրենց ժառանգաւորութեան ձայնին հետեւող՝ կը հեռանան շիտակ ճամբէն, գողնալու համար, անբարոյական ըլլալու համար:

Կը հասկնանք կրթութեան կարեւորութիւնը ու օգտակարութիւնը, բայց երբ ժառանգաւորութիւնը խորունկ է, ծանր է, ո՛հ այն աստիճանի ինչ կրնայ ընել կրթութիւնը:

Ո՛չինչ:

Դիտած էք անշուշտ պտտիկներ, խեղճուկ տղեկներ որոնք պղտիկ տարիքէն բնական տարօրինակութիւններ ունին, մտքի ու բանականութեան անհաւասարակչութիւն մը,

Ղղային մանր մուկն անհանգստութիւններ, մտքի յոգնութիւն, երբեմն մարելիք, շատակերութիւն: Ինչ է արդեօք ասոնց բո՛ւն պատճառը: Ալքոլամոլութիւն ծնողաց, որ ժառանգականութեան օրէնքին համաձայն իրենց զաւկըներուն փոխանցուած է:

Ո՛վ հայրեր ու մայրեր, եթէ առաջուց չի խնամէք ձեր զաւկըները, եթէ առաջուց հետեւիլ չի տաք առողջապահիկ կանոններուն, գիտցէք ու կատարեալ համոզում գոյացուցէք որ ապագայ ջլախտաւորներ պիտի դառնան անոնք, ու իսկական փորձանք մը ձեր գլխուն: Պէտք չէ սակայն շփոթել այն ջլախտաւորներուն հետ, որոնք մտքի ծանր յոգնութիւններու տակ կ'ընկճուին և ոչ թէ ժառանգաւորութեան:

Այս տեսակ հիւանդութեանց մէջ բժշկին դերը իսկապէս մեծ է: Ըստ որում անիկա է որ մանրապնին ըննութեամբ ու հարցափորձութեամբ պիտի հասկնայ թէ՛ դիմացինը այլասեր մըն է, ջլախտաւոր ժառանգաւոր մը, թէ ոչ պարզ Ղղային մը: Անիկա պիտի գիտնայ տարբերութիւն դնել բոլոր անոնց մէջ, ո՛չ միայն ենթական բուժելու կամ բարւոքելու, այլ ապագային անոր առնելիք զգուշութեանց համար: Առաջին սերունդին զաւակները իրենց կարգին կրնան ալքոլամոլներ ըլլալ: Մեծամասնութիւնը դժբաղդաբար այս տխուր մօլիններն են որ կը կազմեն, որոնք չէ թէ մինակ մարմնով տկարացած՝ անոր կը դիմեն նորէն, այլ գլխաւորապէս ժառանգաւորութեան աննկարագրելի ոյժէն մղուած կը գինովնան:

Ձե՛ք հանդպած երբեք տղաքներու, ալքոլին համը ի՛նչ ըլլալը չգիտցած տղաքներու, որոնք ալքոլ կը փնտռեն հիւանդ զօրութեամբ մը ու առջի բերանէն կը գինովնան:

Ահաւասիկ բուն ալքոլամոլները: Ասոնք են որ հիւանդանոցները, յիմարանոցները, ապուշանոցները կը լեցնեն: Դացէք անգամ մը մեր Հիւանդանոցը, այցելեցէք յիմարանոցը, հարցումներ ուղղեցէք ջլախտաւորներուն, ու այն ատեն գէթ կատարեալ համոզում կը գոյացնէք, եթէ սակայն դեռ չէք գոյացուցած:

Ասոնք չի պիտի հիւանդանային, եթէ առջի օրէն իրենցմէ բաժնէին ալքոլը, անոնց հասկցնէին Տարէնպէրկեան համեստ ոճով մը ալքոլին թոյն ըլլալը: Ատոր կատարեալպէս վստահ եմ: Բայց անոնք իրենց գիտցածէն մաղի չափ չեն շեղիր: Ինչ որ սովորած են իրենց մամիկէն կամ տատէն, նոյնը կը պահեն ու բնա՛ւ չեն շեղիր անկէ:

Դալով երկրորդ սերունդի զաւակներուն, հոս առանց երկար ծանօթութեանց մէջ մտնելու ըսենք որ, եթէ ոչ ամէնքը ալքոլամոլ՝ բայց գրեթէ մեծագոյն մասը հիւանդկախ տկարամիտներ են: Մօրէլ ասկէ յետոյ տարիներ առաջ, ինչպէս նաև ժօթրուա, Գրեթլին և անուանին Ռէժիս հաստատեցին թէ ալքոլամոլին զաւակները, թոռները, այլասերեալներ են, որոնք օր մը չէ օր մը անպատճառ յիմարանոցը կը վերջացնեն իրենց տխուր կեանքը:

Ասոնց մտաւորական ոյժը պակաս է:

Կեանքի առաջին քայլերուն կը դողդղան, կեանքի պայքարի առաջին դժուարութեանց դէմ կը կորսնցնեն իրենց տրամաբանելու ոյժը: Ոմանք ծանր հիւանդութեան մը ատեն, քանի մը գաւաթ ալքոլով կը կորսնցնեն իրենց խօսելու կարողութիւնը ու կը զառանցեն, և բժիշկը եթէ չի գիտեր անոր ալքոլամոլի զաւակ ըլլալը՝ իրար կ'անցնի ու թերեւս անոր մահուան ակնդէտ կը սպասէ:

Այսպիսիները լեցուած գաւաթներու կը նմանին որոնք կը յորդին կաթիլ մը ջուրէ իսկ: Ձեմ գիտեր ո՛վ է զրուցեր ասիկա. բայց ըսողը, ո՛վ ալ ըլլայ, շատ ճիշդ է ըսած:

Ահա՛ այսպիսի ալքոլամոլներն են որ իրենց կեանքին կէսը յիմարանոցներու մէջ կ'անցունեն: Երրորդ սերունդի զաւակները կրնան տակաւին ծնունդ տալ տեսակ տեսակ այլանդակ գլուխներու, անճոռնի մարմիններու, որոնք պղտիկ հասակէն արդէն հիւանդներ են և հիւանդանոցի ապրանքներ: Ոմանք վերնոտութեամբ, լուսնոտութեամբ կը չարչարուին, ուրիշներ Ղղայնականութեան ձեռքը գերի եղած սոսկալի կըլ-

տամբանքներու կը մատնուին և այսպէս շարունակաբար: Վերնոտութիւնը ժառանգական հիւանդութիւն մըն է և սակայն անմիջապէս ըսեմ որ, անոր գլխաւոր պատճառներէն մէկն ալ ալքոլն ու նլքոլամոլութիւնն է:

Տղոց քով վերնոտութեան էն գլխաւոր պատճառներէն մէկը ծնողքներու ալքոլամոլութիւնն է: Շատ անգամ, մենք բժիշկներս, չենք կրնար գտնել վերնոտի մը ծնողքին վրայ ալքոլամոլութեան օ և է բարացուցական նշան: Բայց պէտք է մոռնալ թէ, տղայ մը կրնայ արգասաւորուիլ նաև գինովութեան գիշեր մը: Կռկէի այս մասին Տօքթորուհի Տիկին Լուիզ Թուսէնի տեսութիւնները մէջ բերել, սակայն այս մասին արդէն Տօքթ. Եդ. Մասիս նախապէս ծանօթութիւն տուած ըլլալուն՝ զանց կ'ընեմ:

Չորրորդ սերունդին դաւկըներն ալ ապուշներ են, անկարող ընդհանրապէս նոր սերունդի մը ծնունդ տալու: Չկարծուի թէ բոլոր այս բաժանումները քմածին են: Երբեք: Հիւանդանոցներու մէջ, յիմարանոցներու մէջ կատարուած քննութեանց արդիւնքներ են միայն, հետեւապէս կատարեալ իրողութիւններ: Ուրեմն, քանի որ ժառանգաւորութեան զարհուրելի օրէնքը կը պահանջէ որ ծնողքին մոլութիւնը զաւակներն ու թոռները տուժեն, հետեւապէս նոր սերունդէն, գոնէ պղտիկներուն, իրենց կենաց առաջին քայլերէն առել տալու աշխատինք օղին, և գինովութեան ահարկու հետեւութիւններէն սոսկացնել ջանանք:

Տարակոյս չունինք որ քիչ ժամանակի մէջ զդալի արդիւնք ձեռք կը բերուի: Կարեւորն է չվնասելով յարատեւել, աշխատիլ, միշտ աշխատիլ դէպի լաւը, դէպի բարին:

Ասոր համար ամէն կարելի միջոց գործադրելու է:

Վսեմ. Տօքթ. Պէտիմ Էօմէր փաշայ Նեյսալ-ը-Անիյեթի մէջ կ'ըսէ թէ բժշկական խօսուողութիւնները, գիրքերը, առողջապահական տեսողութիւնները, և մանաւանդ պարբերականները, հանդէսները, օրաթերթերը, ա-

մէնքն ալ այս բարի ու վսեմ նպատակին ծառայանելու ենք, և իրաւամբ սորվեցնելու ենք ամէնուն թէ՛ ալքոլը թոյն և ալքոլամոլութիւնը մեծ աղէտ մըն է: Այո՛, շարունակ կրկնելու ենք այս խօսքը: Մինակ այս եթէ մեր ականջին օղ ըլլայ, կը բաւէ: Մնացածը բարեբար արդիւնքները ինքնին կուգան: Դէթ ես այնպէս կը յուսամ:

ՏՕՔԹ. Տ. ԱԼԼԱՇՎԵՐՏԻ ՈՐԴԻ

ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐ

ԽԻՆԴ ԵՒ ՍՈՒԳ

Իրական կեանքի տխուր տուամ մը՝ վիպական հանգամանքով, ամենադառն տպաւորութեամբ մը համակեց մայրաքաղաքիս յոյն հասարակութեան ժաշնակարգ ընտանիքներէն մէկը, Էվէնիտիս ընտանիքը, ու իրենց բոլոր բարեկամները: Հարսնիքով սկսուած ու մօ՛ծնապաշտութեամբ վերջացած դրուագ մը, հարստութեան ու երիտասարդութեան մէջտեղ: Ահա՛ իրողութիւնը, իր ցուրտ մերկութեանը մէջ:

Կ'ըսակի օրը, Թարապիոյ Յունաց եկեղեցիին մէջ, հարսանեկան չքեղ հանդէսով մը կ'ամուսնանար՝ ծանօթ սնդանաւոր Պ. Էօսդաշ Էվէնիտիսի որդին Պ. Էդիէն Էվէնիտիս, Պ. Լէօնիտաս Չարիֆիի չորհագեղ աղջկան՝ Օր. Էլէն Չարիֆիի հետ: Յունաց Տ. Եօաքիմ Ս. Պատրիարքը՝ իբրև վաղեմի բարեկամ այդ երկու մեծ և քարեգործ գերդաստաններուն՝ անձամբ կը նախագահէր արարողութեան, յոյն բարձրաստիճան կղերէն չըջապատուած:

Պատկադրութեան յաջորդեց հարսանեկան սեղան մը՝ Էվէնիտիս Տեարց Եէիքէօյի ծովեղերեայ ամարանոցի գեղատեսիլ պարտէզին մէջ, ուր համակրալից բաժակաճառեր արտասանուեցան հարսին ու փեսին և Էվէնիտիս Չարիֆի ընտանիքներուն կենաց: Հրաւիրեալներուն մէջ կը նշմարուէին պետական պաշտօնատարներ, դեսպանական մարմինը՝ գրեթէ ամբողջութեամբ, Յունաց

բարձր դասակարգը, եւրոպացի ընտանիքներ, և մեր ազգայիններէն՝ Սրբահամ փաշա, Տ. և Տիկին Վ. Էսահան, Տ. և Տիկին Լ. Սեր-վիլէն, Մ. Գույումեան և ֆ. և այլն: Ան-համար թանկագին նուէրներ շնորհակա-նորդական հեռագիրներու և շնորհաւո-րական հեռագիրներու հետ մէկտեղ:

Նորապսակ ամուլը՝ երկուշաբթի իրիկուան ճեպընթաց կառախումբով Վիէննա ուղևո-րեցաւ, մեղրալուսնի ճամբորդութիւն մը կատարելու, ու հարսանեկան ուրախութիւն-ները դեռ կը շարունակուէին հոս՝ Եէնիքէօյի մէջ, իրենց ընտանեկան յարկերուն տակ, հացկերոյթներով ու ողջերթի մաղթանքնե-րով, երբ անակնկալ աղէտ մը արտառութեան փոխեց այդ հրճուանքները:

Չորեքշաբթի առաւօտ, լուր կը տարած-ուէր թէ փեսին կրտսեր եղբայրը՝ Պ. Բան-տիա Էվէնիտիս՝ նախորդ իրիկունը անձ-նասպան եղեր է, ուշվուլէրի հարուած մը պարպելով իր գլխուն: Լուրը ճիշդ էր զըժ-բաղդաբար, եւ դիւրին է երեւակայել յու-ղումը Էվէնիտիս ընտանեաց ազգականնե-րուն ու բարեկամներուն, որոնք Եէնիքէօյ կը փութային կամ կը հեռագրէին, այս ան-գամ ցաւի արտայայտութիւններով: Երեք-շաբթի իրիկուն, Տ. եւ Տիկին Էօսթաշ Էվ-եէնիտիս մտերմական կոչունք մը կուտային իրենց Եէնիքէօյի ամարանոցին մէջ, եւ սե-ղանէն ետք՝ հրաւիրեալ երկսեռ բազմու-մութիւնը կը պտտէր պարտէզին հովանուտ բացաստաններուն մէջ, սեպտեմբերի լուս-նակ գիշերուան հմայքը վայելելով, երբ հրազենի պայթիւն մը լսուեցաւ պարտէզին ծայրի պուրակէն: Դէպի ձայնին կողմը փու-թացին սրտատրոյի, եւ գետին փռուած գտան Պ. Բանտիա Էվէնիտիսը, որ փորձած էր կեանքին վերջ տալ. գնդակը կոկորդէն մտնելով աջ աչքը տարած էր: Անձնապա-նութեան շարժառիթը յայտնի չէ:

Վերջին լուրերու նայելով, բժշկական դարմաններու և ծնողական խնամքներու շնորհիւ, վերաւոր երիտասարդին վիճակը յուսահատական չէ և կեանքը փրկուած է: Պ. Բանտիա Էվէնիտիս հազիւ 24 տարեկան

կայ, և իր հարուստ ու ազնուական երիտա-սարդի դիրքին կը միացնէ՝ լեղուագէտ սւ-ղարգացած միտքի տէր անձի մը առաւելու-թիւնները, համակրելի երեւոյթով ու ազնիւ բնաւորութեամբ: Բարիզի առեւտրական բարձրագոյն վարժարանին մէջ իր ուսումը աւարտելէ ետքը՝ գինուորական ծառայու-թեան մէջ մտած էր Յունաստան, և մէկ տարիէ ի վեր Կ. Պոլիս վերադառնալով՝ իր հօրը սեղանաւորական հաստատութեան մէջ կ'աշխատէր:

ՄԻՋԱԶԴԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԲԱՐԻԶԻ Քօնթուառ տ'Էսքոնդ Դրամա-տունէն քանի մը միւրն շորթելով իր հոմա-նուհին հետ Պրազիլիա փախչող դրագրին՝ կալէի արկածախնդրութիւնները պատմած էինք Մասիսի նախորդ մէկ թիւով: Երէկ-ուան թղթաւերով հասած եւրոպական թեր-թերը կը հաղորդեն թէ Պրազիլիոյ կառա-վարութիւնը արտօներ է Պահիաի կառավա-րիչը՝ Յրանսայի կողմէ շրկուած պաշտօնեա-ններուն յանձնել ժան կալէն, իր հոմանուհին՝ Տիկին Մէնէլլին ու այս վերջինին սենեկա-պանուհին, Մառի Օտօ կամ «թխաղէմ կիւնը» —ինչպէս կը կոչուէր իր փախուստի պահուն: Քոնթուառ տ'Էսքոնդի գողը ու իր երկու մեղսակցուհիները անցեալ շաբաթ օր Պահի-աէն Քօրսիլիէն շոգենաւը դրուած են, ոս-տիկանական հսկողութեամբ, Յրանսա վերա-դարձուելու համար, ուր պիտի հասնին հոկտ. 7ին (ն. Տ): Պրազիլիոյ իշխանութիւնք՝ երեք ձերբակալեալներուն հետ Յրանսա կը վերադարձնեն նաեւ անոնց բոլոր գոյքերը և 600,000 ֆրանքի գումարը որ կալէի քովէն գտնուած էր, Քաքարիմա զրօսանուին մէջ, երբ Պահիաի նաւահանգիստը հասած էր «Պա-ռոն տը կաւալ» կեղծ անունով: Քոնթուառ տ'Էսքոնդ դրա Կատունը նախազդու թիւնն ունեցեր է ապահովագրել տալու այս գոյ-քերն ու 30,000 նաբոլէոնի գումարը, ծո-վային արկածներու դէմ:

ԿՈՎԿԱՍԻ Փոխարքայ Կոմս Վարանցով Տաշքով Սեպտ. 20ին այցելեց Պաքու, և շքեղ ընդունելութիւն գտաւ: Կայարանին մէջ կը սպասէին կառավարական պաշտօն-եայք, հիւպատոսք, զինուորականք, հոգեւոր պետեր, երեւելիներու հետ, որք հոն եկած էին բարի գալուստ մաղթելու Փոխարքային: Փոխարքան ողջունեց զամենքը. ապա ընդունեց Հայ հոգեւոր պետը, որ վեղար ի գլուխ ներկայացաւ իրեն, և բարի գալուստն ուղերձ մը արտասանելով, ի դիմաց տեղւոյն Հայ հասարակութեան, ուրախութիւն յայտ-նեց Փոխարքային այցելութեանը համար:— Փոխարքայ Կոմս Վարանցով Տաշքով հետե-եալ կերպով պատասխանեց այս և ուրիշ ուղերձներու.— «Շատ դո՞ւ մնայի ձեր խօսքե-րէն. կը յուսամ թէ ամէն ոք պիտի ջանայ Կովկասի բարգաւաճման»:— Ինչպէս կ'երևի, Տաշքով դեռ պաշտօնի վրայ կը մնայ և իշ-խան Զօր. Լուի Նաբուէտն գործի չէ սկսած տակաւին:

ԻՏԱԼԻՅԻ հռչակաւոր գրագէտ Կապրիէլէ տ'Անունցիօ այս օրերս գայթակղական դէպքի մը հերոսն հանդիսացաւ: Բանի մը ամիս ա-ռաջ յարաբերութիւն հաստատեց նախկին նախարար Ռուտինիի այրի աղջկան, տիկին Գարլոթթիի հետ, և փափաքեցաւ անոր հետ ամուսնանալ: Երկուքը մեծ գումարներ մըս-խեցին և տիկինին հանգուցեալ ամուսնոյն ազգականները զայս տեսնելով, դատարան դիմեցին պահանջելով որ գաւակներուն վրայ խնամակալ կարգուի, և իրենց մօր ձեռքէն առնուի ժառանգութեան մատակարարու-թիւնը: Բայց սէրը կը շարունակէր իր ճամ-բան, և Կապրիէլէ տ'Անունցիօ Զուիցերիա երթալով, թողուց իտալական հպատակու-թիւնը, և եղաւ զուիցերիական հպատակ, որպէս զի պարենայ ամուսնալուծօւիլ իր կնոջմէն, և ամուսնանայ այրի տիկին Գար-լոթթիի հետ, ինչ որ անկարելի էր ընել Իտա-լիոյ մէջ, զի հոն ամուսնալուծման օրէնք չկայ:

ԲՐՈՅ. ԲՕԽ, գերմանացի հռչակաւոր միջրոպաբանը որ Ափրիկէի մէջ կը շարու-նակէ իր մանրէաբանական աշխատութիւն-ները գերման արեւելիեան Ափրիկէի գաղթա-վայրին մէջ, մեծ կարեւորութիւն ունեցող գիտք մը ըրեր է: Բրօք. Բօխ գիտեր է թէ ընդհատ ջերմը (սըթմա) կրնայ հիւանդէն ա-ռողջ մարդու փոխանցուիլ «Օրնիթորուս

լարիկուի» անուն միջուկի մը միջոցաւ: Այս միջատը հիւանդին արեան միջրոպները կը ծծէ, և յետոյ զանոնք կը փոխանցէ առողջ մարդու մը արեան մէջ, մօրթին վրայ կե-նալով: Կը գտնուի գլխաւորաբար ընկիներու հիւղակներուն մէջ, որոնք շինուած են կա-րաւաններու ճամբուն վրայ, ինչպէս նաև սպիտակամորթներու յատկացուած ապաստա-րաններու և պանդոկներու մէջ:

ԻՏԱԼԻՅԻ երկրաշարժին աղետալի հե-տեանքներն աւելի ծանրալիւ հանգամանք մը առին, արկածեալներուն տաղաւարները շինուելէ առաջ յորդահոս անձրեւներ տեղա-լուսն: Անցեալ չորեքշաբթի և հինգշաբթի սոսկալի փոթորիկ մը տիրեց՝ երկրաշարժէն արկածեալ Բիծծօի, Մոնդէ—Լէոնէի և Քա-դանցարօի մէջ, շփոթութեան մատնելով ընակիչներն և փլցնելով կիսաչէն առժամեայ տաղաւարները: Կացութիւնն աւելի ծանր է այժմ, որովհետև հարիւրաւոր վիրաւորեալ-ներ աղէտին վայրը կը գտնուէին: Բարե-բախտաբար օդնութիւնները կը տեղան ամէն կողմէ: Իտալացի հռչակաւոր երգահան Լէ-ոնքավալլօ նամակ մ'ուղղելով Պապին, իր ցաւը կը յայտնէ Գալապրիայի աղետալի երկ-րաշարժին առթիւ, և կ'ըսէ թէ մտադրի է «Աղօթեմք մը յօրինել Ս. Կոյսին ուղղուած, զայն տպագրել իր ծախքով, և հասոյթին մէկ մասը նուիրել Գալապրիայի արկածեալ-ներուն, և միւս մասն ալ գործածել Մօնդէ-Լէօ Ուֆֆրիկօի» Ս. Կոյսին նուիրած եկեղեց-ւոյն գեղեցկացման»: Իտալացի երգահանը խնդրեր է Պապէն որ ընդունի այս գործին ուղերձը: Պիոս Ժ. հաւաներ է:— Երեսփո-խան Յաղացարի կոչում ըրաւ Գալապրիացի միլիոնատէրներուն, որպէս զի օգնեն արկած-եալներուն: Այս միլիոնատէրները, որոնցմէ ոմանք հարիւր միլիոն ֆր. ի տէր են, և վը-րեթէ ամբողջ երկիրն իրենց ձեռքն է, ցարդ սանդիմ մը կամ տախտակի կտոր մը տուած չեն պատասպարաններ շինուելու համար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Տէր ԵՆ ՏՃՈՐԿԵ—ՏՈՒՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Ակիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն մր.

Ակիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն մր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԶՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒՄ ԵՒ ՊԱՆԵՍ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութեան է 74% արժ ԲԻՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց առած երաշխաւորութեան:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանսայի մէջէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Բրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դանոնադի անդիք ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Բրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Բաթրճըզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Բրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Ծանալու դիմել պիտի տրուի այն ցանկին որ կարեւոր արդիւնք մը ի սպորձած քլայ անձնապէս:

9—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ բոհաֆիյի ապրանքաց

Մեծ—Շուկայ, Բիւրճիկներու դրան կից, Բ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համաժ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Այն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թոհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւուր հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն ազակեղութիւն, եւ դիւրամատ չլի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղա՜մ վարդեան մեծապէս գոհ Թաղաւած է իրաւաւորութիւն յաճախողները:

պէտք է որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուելու համար:

9—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտութեամբ եւ երկար աշխատութիւն ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղեաց, միզային ձանձախութեան հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գաղիական եւտերը, Այս վերջին տխուրը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոաներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զօրեղութիւն օրերը միայն ձրի: 9—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեցներու, ամեն ճեսակ կահ կառասիներու եւ ամենեւն անոսանքներու, եւլն.

հազուսներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուաւթան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրելու նպատակաւ, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զոտ, կրներու եւ ալրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղաւնի լամբաներ, ֆիթէներ եւ այլն.) ճոխ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով, եւ կանխիկ ու ապուրիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիշեալ վաճառատները, ուրկէ անառարկայ ունենալու գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապուրիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ, գոհարեղէնները երբ գործածուած բայց ա՛յլ ու մնացած բլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կառուսին: Իսկ ապուրիկ ծախուած եւ ա՛յլ ու մնացած միմիայն ադամանդեայ, գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կառուսին:

3-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարահական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵԾ՝ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՄԲ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկու արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ լէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր Զաւաճաններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչ զէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՕՕՊԵՐԱԿԻՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամադրութիւնը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամադրութիւն եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցո

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղաւթի խան, Վոյվոտա, Ղալաթիոյ:

3-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵՍԼ Ի ԲՍՈՒՋ 1828-1829

Հ Ի Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Փր.
1902ին դանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երախաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին դանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայեռախաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպատաւոր պայ-պաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոն ապահովագրուողք ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որս 6ի կենթարկուին միշտ այն անձինք, որ օտահաբաժիններու բարդման (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապաⁿհովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՄՈՒՔԻՆ Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրըն Օղլու

Մասնաձիւղ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

10 — 10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆՍԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՌՔՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովայինհարկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւուն է Ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքանդ Խան,

10 — 10

LA CONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ճրանս. կառավարութեան հսկողութեան ներքեւ Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր. Իրամագլուխ եւ պահեստի 38 ՄԻԼԻՈՆ Ֆր. Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց ԱՐԱՍ Ս. ԳԱԼՅԱՆՍ

Պոլիս, Հանօրույօ խան Կօ. 53

Դաւանողները պատուաւոր գործակալներ կը փնտռուին: 25—50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԷՐԵԱՆ

ՓԱՍՏԱՌԱՆ

Պոլիս. Մարբունճըլար, Պարնաքան խան Թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանձնէ եւ խնդրոյ տարակալ եղած գործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ տնակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ տոհմաբանական ու օսվորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ հէտ օր ձրիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ տնհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձրիաբար կուտայ:

Կը յայտնաբերէ որ մինչեւ օրայօ մասին կարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չտառցուին, ապահովագրութիւն չի տառագործի: Ապահովագրական վիճառաց հաւանական գումարներու եւ փախարժէքներու գանձումը եւս կը ստանձնէ: 15—40

ԱՍՏՄԵԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՍ. ՄԵՇ ՓՈԳՈՅ ԹԻՒ 200

Կայանա-Մէրայի Լիսէին դէմ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ 5—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՓԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՒՑՈՆ 1782 ԻՆ

ԿԸ ՓՈՐԾԷ Ի ՓՈՒԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

• Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ոսկի հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ վիճառաց մէջ իր տնտեսական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ ամէն տեսակ տնտեսութեւն շարժուն ու անշարժ, յայտնաբերող:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄԻՆ ՎՆԱՍՈՒՑ: Յարդ վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. անգլի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքայիս խան, Պանֆ Օթումանի ֆոյ

Ղալաթիա:

Փախ գործակալ է Պոլիս

ԹՈՒԲ. ԱՐԿԵԱՆ

Եմին պէյ խան

Ճիւլան Թէֆէսան

Ֆնսզիւն խան

Չնիւլ բիւզուրու

7—10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ